

Պրոֆ. Սարգիս Բոյսր երկրներէ միացէ՛ք.

Սոց.-դեմ. բանասրահան Հայ կազմակերպութիւն.

ՍՈՑ. ԳԵՄՈՒՐԱՏԱԿԱՆ, ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐ-  
ՊՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ  
ՍԻՍՏԵՄԸ ԵՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ:



Բ Ա Գ Ո Ւ.

Տպարան կենտրոնական կօմիտէի.

1905.

324.1 (479.2)

10  
2

Ս Խ Ա Լ

Ո Ի Ղ Ի Ղ

էջ 4 տ. 3	(քաղաքացիական)	. . . . .	(քաղաքացիական)
էջ 5 տ. 12	ապահովութիւնը	. . . . .	անասլահովութիւնը
էջ 7 տ. 8	զբութիւնից	. . . . .	զբութիւնը
էջ 11 տ. 3	(16—18 p.)	. . . . .	(16—18 տ.)
էջ 14 տ. 11	հասար	. . . . .	հասարը
էջ 17 տ. 9	խամ	. . . . .	կամ
էջ 17 տ. 10	խամ	. . . . .	կամ

329.1 (479,2)

Սոց.-դեմոկրատ. բանուորական հայ կազմակերպութեան (կենտրոնական) խորհրդածոգովի մասին:

Սոց.-դեմոկրատ. բանուորական հայ կազմակերպութեան Կենտրոնական Կոմիտէն մօտ անց' ալում (հօկտեմբերի սկզբներում) խորհրդածոգովի հրաւիրեց իւր մարմիններին և կազմակերպութեան ակախա ուժերին՝ վճակելու մի շարք կենտական հարցեր:

Խորհրդածոգովն 'ի նկատի առնելով «Սոցիալիստ»-ի նախկին խմբագրութիւնից առաջարկած ծրագրի պրօէկտը (տես Սոցիալիստ № 1) գտաւ անբաւարար և ձեռնարկեց կազմել նօր ծրագրի պրօէկտը.\*)

Չանադան կէտերի նկատմամբ երկար փնտրանութիւններից յետոյ, ընդունեց ներկայ ծրագիրը, իբրև ամբողջ կազմակերպութեան ծրագրի նախագիծ, որը վերջնականապէս կընդունուի ապագայ ընդհանուր համագումարում:

Խորհրդածոգովը ծրագրի քննութիւնից յետոյ անցաւ կազմակերպչական սիստեմի և կանոնադրութեան մշակման. Առաջարկած նախագծերի քննութիւնից յետոյ, ներկայ կազմակերպչական սիստեմը և կանոնադրութիւնը ընդունեց իբրև վերջնական որն, առաջարկում ենք մեր բոլոր մարմիններին և ընկերներին 'ի գործադրութիւն:

Ապա խորհրդածոգովն անցաւ միւս հերթական հարցերին, որոնց վերաբերեալ վճիռները և սեղօլիւցիաները կ'կարգան մեր ընկերները սոյն հրատարակութեան մէջ:

\* Պրօէկտ կազմելիս օգտուել ենք Գերմանական Պուսական և որիչ Սոց.-դեմ. կուսակցութիւնների ծրագիրներից:

41  
2017



Ի վերջոյ խորհրդածողովն յայտնեց իւր բուն սգևութիւնն ու ողջոյնները Պետերբուրգի, Լօղզի, Վարչաւայի և Գուրիայի ընկերներին՝ նրանց հերստական կուի համար, յայտնելով իւր ցաւը, որ հայ պրօլետարիատը ներկայ պարագաներում փոխանակ ձայնակցելու նրանց յեղափոխական շարժումներին, ստիպւած է գոյութեան կուի մի օրհասական պայքար տանելու իւր ուտերի վրայ.

Ապա խորհրդածողովն յանձնարարեց Կենտրոնակաղ նորընտիր Կօմիտէին՝ յայտնելու իւր ընկերական շնորհակալութիւնը՝ Ամստերդամի սօցիալիստական միջազգային Բիւրօյին և գերմանական սօց.-դեմ. կենդրօնին՝ նրանց ցոյց աւած բարոյական ու նիւթական աջակցութեան համար, մանաւանդ այսպիսի պարագաներում, երբ մենք մեր իրականութեան մէջ չըջապատուած ենք բազմաթիւ թշնամիներով, սառուցի լեռներով և նոզկալից ցինիլով, երբ մենք ստիպւած ենք մղել մեր նաւակը դէպի առաջ կատաղի յորձանքների միջով, յոյս դրած զազափօրի յաղթանակի, սկզբունքների մաքրութեան և պատմական կենսունակութեան վրայ.

Ը ն կ ե բ ն ե ր!

Քաղաքական վերածնութեան օրերում յեղափոխութեան այս տատանումների մէջ, ձեզ մնում է կրկնապատկել ձեր եռանդը՝ մղելու շարժումն աւելի ու աւելի առաջ: Տարածեցէք սօցիալիզմի սերմերն առանց յուսահատելու ցրտաշունչ քամիներից և բէակցիայի սանձգութիւններից, փշրեցէք նախապաշարումների, յետամնաց զազափարների լեռները և կազմակերպեցէք պրօլետարիատը, մղելով նրան դէպի ինքնակալութիւնը, ջուտ բազուկներով զարկելու նրա մաշւած հիմքերին:



Կազմակերպեցէ՛ք և ողի ներշնչեցէ՛ք լրւած Հայ  
պրօլետարիատին և աշխատեցէ՛ք ամրացնել նրա կապերը  
թիւրք պրօլետարիատի հետ: Եղէ՛ք հպարտ և եռանդուն  
ոչ թէ ձեր բազմութեամբ, այլ այն խոր դիտակցութեամբ,  
սկզբունքների ամբուլթեամբ և զազափարների մաքրու-  
թեամբ, որը կարող է միայն մեզ մզել զէպի ըմբոստ յազ-  
թանակները: Աւելի քան այժմ մեզ անհրաժեշտ է աւելի  
ամրացնել մեր կազմակերպութեան հիմքերը, աւելի ուժեղ  
թափով ներդործել յեղափոխութեան վերջնական յաղթա-  
նակի վրայ:

ԳԵՆԴՐՈՆԸԿԸՆ ԿՕՄԻՏԷ

Հոկտեմբեր 1905 թիւ.



Ն Ա Խ Ա Գ Ի Մ Յ Բ Ա Գ Բ Ի .

Սօց. գեմ. բան. հայ կազմակերպութեան.

Բիւրդերական (քաղաքիական) հասարակութեան անտեսական զարգացումը բնական անհրաժեշտութեամբ աւաջնորդում է զէպի մանր արդիւնագործութեան խորանկումը, որի հիմքը կազմում է բանւորի մասնուոր սեփականութիւնը՝ իր արդիւնագործութեան միջոցների վրայ: Նա բաժանում է բանւորին իր արդիւնագործութեան միջոցներից և զարձնում նրան սեփականագործի պրօլետարսական նոյն այդ արդիւնագործութեան միջոցները զառ, նում են մենափաճառութեան անհամեմատ փոքր թւով կապիտալիստների և խոշոր կալւածատէրերի ձեռքին:

Արդիւնագործութեան միջոցների մենափաճառութեան հետ ձեռք ձեռքի աւած առաջ է դնում մանր ու ցիրուցան արիւնարերութենների բնկճումը կօլօսայ խոշոր արդիւնարերութիւնների միջոցով, հասարակ գործիրը փոխարինում է մեքենայով, առաջ է բնթ. ախում մարդկային աշխատանքի արդիւնաւէտութեան մի վիթխարի աճեցողութիւն: Սակայն այս յեղաշրջման բոլոր օգուաները մենափաճառում են կապիտալիստներից և խոշոր կալւածատէրերից: Ընդհակառակը պրօլետարիատի և խորասուզող մեջին խտերի—մանր քաղաքացիներ, գիւղացիներ, համար այդ զարգացումը նշանակում է նրանց գոյութեան անապահովութեան աճեցում. նրանց թշուառութեան, ճնշման, սարկութեան, բնկճման և շահագործութեան աճեցում:

Միշտ մեծանում ու ծաւալում է պրօլետարների թիւը, շարունակ սրում է շահագործողների և շահագործ-



ւողների, տիրապետողների և ենթարկւողների հակառակութիւնը, միշտ ու շարունակ դառնանում ու անսօքանում է դասակարգային կռիւր բուրժուազիայի և սրբօրէաբրիաւի մէջ, որ բաժանել է ժամանակակից հասարակութեան երկու թշնամական բանակների և կազմում է համօրինակ նշանը բոլոր ինդուստրիական երկրների:

Սեփականատէրերի և սեփականագուրկերի մէջ գանձար վիճը դեռ աւելի և աւելի է խորանում ու լայնանում շնորհիւ կապիտալիստական արդիւնագործութեան սիւսանմի էութեան մէջ հիմնւած կրիզիսների, սրանք աւելի ու աւելի բնդարձակում և աւերիչ են դառնում, սրանք բնդհանուր ազատագրութիւնը գարձնում են հասարակութեան նօրմալ կացութիւն և ակնյայանի փորձերով ազացուցանում, որ արդիւնագործութեան միջոցների մասնաւոր սեփականութիւնն այլ ես անհամակերպելի է դարձել նրանց նպատակաշարմար գործազրութեան և լիակատար գաւգայման հետ:

Արդիւնագործութեան միջոցների մասնաւոր սեփականութիւնը, որ մի ժամանակ միջոց էր ծառայում ազատագրելու արդիւնարերողի սեփականութիւնն իր արդիւնքների վրայ, դարձել է այսօր մի միջոց՝ էքսպրօպրիացիայի ենթարկելու գիւղացիներին, արհեստաւորներին և մանր վաճառականներին—և ոչ բանւորներին՝ այն է կապիտալիստներին և խոշոր կալւածատէրերին—աէր գարձնելոյ բանւորների արդիւնքների վրայ: Միայն արդիւնագործութեան միջոցների—կալւած ու հող, հանքափիճեր ու հանքալիսներ, հում նիւթեր, մեքենաներ, հագորդակցութեան միջոցներ և այլն—միայն այդ բոլորի կապիտալիստական մասնաւոր սեփականութեան վերացումը հասարակական սեփականութեան և ազրանքային արդիւնարերութեան

յեղաշրջումը՝ սօցիալիստականի, այսինքն հասարակութեան համար և հասարակութեան միջոցով առաջ տարւող արդիւնագործութեան մէջ, — կարող է ներգործել, որ խոշոր արդիւնագործութիւնը և հասարակական աշխատանքի մշտապէս աճող բեղմնաւորութիւնը, փոխանակ շահագործւող դասակարգերի թշուառութեան և ընկճման աղբիւր լինելու, կ'դառնան նրանց ամենարարձր բարեկեցութեան և բազմակողմանի ներգաշնակ կատարելագործութեան աղբիւր:

Հասարակական այդ յեղաշրջումը նշանակում է ազատագրութիւն ոչ միայն պրօլետարիատի, այլ և համայն մարդկային ցեղի, որ դուժում է այսօրւայ դժնդակ պայմանների ներքոյ: Մակայն ազատագրական այդ մեծ միտիան կարող է մի յն բանւոր դասակարգի գործ համարել, որովհետեւ միւս բոլոր դասակարգերը, հակառակ շահերի փոխադարձ ընդհարման, այնուամենայնիւ բոլորն էլ կանգնած են արդիւնագործութեան միջոցների մասնաւոր սեփականութեան հայեցակէտի վրայ և ժամանակակից հասարակութեան պահպանութեան էական հիմքերը կազմում են նրանց ընդհանուր նպատակը:

Բանւոր դասակարգի կռիւր կապիտալիստական շահագործութեան դէմ անհրաժեշտօրէն կազմում է մի քաղաքական կռիւ: Բանւոր դասակարգը չի կարող իր տնտեսական կռիւններն առաջ վարել և իր տնտեսական կազմակերպութիւնը զարգացնել, առանց քաղաքական իրաւունքների: Նա չի կարող արդիւնագործութեան միջոցները վերածել համայնական սեփականութեան, առանց տիրանալու քաղաքական բարձր ոյժի:

Բանւոր դասակարգի այդ կռիւն իրրնություն և գիտակցական կերպով կազմաւորելը և նրան առաջնորդելը

դէպի իր բանաանհրաժեշտ նպատակը — կազմում է սօցիալ-դեմօկրատիական կուսակցութեան էական գերը:

Եյն բոլոր երկրներում, ուր տիրում է կապիտալիստական արդիւնագործութեան սիտեմը, հաւասար են բանւոր դասակարգի ինտերեսները: Հագորդակցութեան և համաշխարհային վաճառանոցի համար եղած արդիւնաբերութեան ընդարձակումով՝ միշտ աւելի է կախած գրութեան մէջ ընկնում մի երկրի պրօլետարիատի դրութիւնից: Հետևապէս բանւոր դասակարգի ազատագրութիւնը մի գործ է, որին հաւասարապէս մասնակցում են բոլոր երկրների բանւորները:

Եյս խոր գիտակցութեամբ սօց.-դեմ. բանւոր հայ կազմակերպութիւնը զգում է և բացաղբում իրեն միաբան ու համերաշխ բոլոր երկրների դասակարգային գիղակցութիւն ունեցող բանւորներին հետ:

Խոշոր կապիտալիզմի ծաւալելովը ինչպէս Ռուսաստանում, նոյնպէս և Կովկասում, առւտահայ ժողովուրդը դարձել է կապիտալիստական կարգերին ենթարկուող մի ժողովուրդ, հայ բանւորը այսօր իրբև հզօր գործան, պիտի իր դիրքը գրաւէ իր օղապատի մէջ, կազմակերպւած ու շողկապւած պետութեան բոլոր ազգերի բանւորներին հետ, նա պիտի վարէ իր դասակարգային քաղաքականութիւնը և կռիւր,

Կազմակերպել ու դաստիարակել հայ պրօլետարիատը և զեկապարել նրա կռիւր, է սօց.-դեմ. բան. հայ կազմակերպութեան գործը:

Սօց.-դեմ. բան. հայ կազմակերպութիւնը կուում է ոչ թէ դասակարգային նոր արտօնութիւններ ու իրաւունքներ ձեռք բերելու համար, այլ խորտակելու դասակարգային տիրապետութիւնը և իրենց՝ դասակարգերին,

տպա կուտւմ է նա, ստանց սեռի և ծագման խտրութեան, յանուն բոլորի հաստար իրաւունքների և հաւասար պարտականութիւնների: Այս հայեցակէտն ընդունելով նա իր ելակէար, կուտւմ է ժամանակակից հասարակութեան ոչ միայն վարձու բանւորների շահագործութեան և ընկճման գէմ, այլ և առհասարակ ամեն մի շահագործութեան և բանութեան գէմ, լինի աչգ ուղղամ գաստ'արգի, կուտակցութեան, սեռի թէ ազգի գէմ, աչգ միեմայն է:

Ռուսական ինքնակալութիւնն է ներկայումս ամենաուժեղ խոչնդար պրօլետարիատի գաստակարգային կուրի և ամենամեծ արգելախիթը իրերի քաղաքական կոչասրական վերածնութեան համար: Եւ սրովհետև բանակալ ցարիզմի տապալման մեծ կատասարօփի ինդրում ամենից շատ շահագրգուած է համառուսական պրօլետարիատը, որին վիճակւած է աւանդարդը լինելու յեղափոխական մեծ շարժման մէջ, աչգ պատճառով սօց-դեմ, բան. հայ կազմակերպութիւնն ընարում է, իշրև ւմենամօա նպատակ, ինքնակալութեան տապալումը և նրա փոխարինումը սամկափարական հանրապետութեան հետևեալ հիմքերով.

1. Ժողովուրդը պետութեան միահեծան գլուխն է, նա ընարում է ներկայացուցչական ժողով, որին յանձնւած է պետութեան գեկը:

2) Ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղանի ընարողական իրաւունք բոլոր ընարութիւնների ժամանակ, կառավարչական բոլոր հաստատութիւնների նկատմամբ, 20 տարեկան հասակի հասած բոլոր բարբառցիների և քաղաքացիութիւնների համար իրաւունք ընդարգին լինելու ընարուոյ: Երեքտարիայ պարլամենտ, սոճիկ ժողովրդական ներկայացուցիչներին պետական գանձարանից, Ընարու-

թիւնները պէտք է կատարեն մի օրինական հանդստեան օր (տօներին):

3) Լայն տեղական ինքնապարութիւն. շրջանային ինքնապարութիւն այն բոլոր տեղերի համար, որոնք աչքի են բնկնում տեղական սրտչ պայմաններով և ժողովրդաբնակութեան կազմով:

4) Անձեռնմխելիութիւն անձի, գոչքի և բնակարանի:

5) Անտահման ազատութիւն խղճի, խօսքի մամուլի, ժողովների, գործադուլների, բնկերութիւնների:

6) Անցազրի և տեղափոխութեան բոլոր արգելքների վերացումը:

7) Բարձերի (соезowie) վերացումն և կատարեալ համահաստար իրաւունքներ բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց սեռից, կրօնից, տեղից և ազգութիւնից:

8) Ամեն մի ժողովուրդ իրաւունք ունի կրթութիւն ստանալ իւր մայրենի լեզուով, ծախսերն ապահովեցրած պետութեան և ինքնապար մարմինների հաշուով. Հիւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի բացազրել իւր մայրենի լեզուով ամեն տեղ. պետութեան մէջ բոլոր լեզուներն ունեն համահաստար իրաւունքներ բոլոր տեղական, հասարակական և պետական հիմնարկութիւններում:

9) Ծրի և պարտադիր, բնդհանուր և պրօֆեսիօնալ ուսումն երկու սեռի բոլոր երեխաների համար մինչև 16 տարեկան հասակը, պետութիւնը կամ ինքնապար մարմինները հոգում են շունտերների բոլոր պէտքերը:

10) Բոլոր պաշտօնեաներն բնարոււմ են ժողովրդից, նրանց պատասխանատուութիւնը և երաշխատրութիւնը:

11) Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի սովորական կարգով հետամտելու երգուեալների դատարանում ամեն մի պաշտօնիայի:

12) Զրի իրաւական հոգատարութիւն և օգնութիւն:

13) Վնասի հատուցումն անմեղ մեղաբաւարժին, ձեր-  
բակալւածին և դատապարտւածին:

14) Մահւան պատժի վերացումն:

15) Զրի բժշկական խնամք և առողջապա հական  
հոգատարութիւն: Մեռեալի ձրի թաղումը:

16) Մշտական գորքի վերացումն և նրա փոխարի-  
նումը ժողովրդական միլիցիայի: Ընդհանուր զինավարժա-  
կան կրթութիւն:

17) Մեջադրային վէճերին և կօնֆլիկտներին վերջ  
տալ խաղաղասիրական առեանի միջոցով:

18) Բաժանել և կեղեցին պետութիւնից և դպրոցը  
և կեղեցուց, կրօնը համարել անհատի մասնաւոր գործ:

19) Վերացումն անուղղակի հարկերի, փոխարինելով  
նրանց պրօգրեսսիւ տուրքերի:

20) Հարկերի տարեկան որոշումը:

Բանւոր դասակարգի կանոնաւոր կենցաղի, դասակար-  
դային կուլի յաջողութեան համար Սօց.-դեմ. բան. հայ  
կազմակերպութիւնը՝ պահանջում է:

1) Ըմենաշատը Տ ժամեայ բանւորական աշխատանքի  
օր, արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում:

2) Յրէնքով շարաթական հանդիստ բոլոր վարձու  
բանւորներին, շարունակարար ոչ պակաս 42 ժամից:

3) Պրայմանաժամերից դուրս արգելումէ աշխա-  
տանքը:

4) Գիշերային աշխատանքի արգելումը անտեսու-  
թեան բոլոր ճիւղերում, բացառութեամբ այն տեղերի,  
որտեղ այդ անհրաժեշտ է անխնիքական տեսակէտից  
բոս հայեցողութեան բանւորական կազմակերպութիւն-  
ների: Ղիշերային աշխատանքը շարունակուում է 6 ժամից  
աչ ւնել:

5) Արգելու՞մ է ձեռնարկողին օգուել երեխաների աշխատանքից մինչև 16 տարեկան հասակը, իսկ անշափահասների (16—18 ը.) աշխատանքի ժամերը տևում են 6 ժամից ոչ ավել:

6) Գանացի աշխատանքն արգելու՞մ է այն ճիւղերում, որտեղ այդ վնասակար է կանացի օրգանիդմին. աղատումն կնոջ՝ աշխատանքից, ծննդաբերութիւնից 6 շաբաթ առաջ և 6 շաբաթ յետոյ, պահպանելով աշխատավարձը սովորական շափով:

7) Գառուցանել բոլոր գործարաններում և գանազան ձեռնարկութիւններում, որտեղ աշխատում են կանայք, առանձին շինութիւններ կրճքի հիւանդութիւն ունեցողների և փոքրահասակ երեխաների համար: Մանուկներին սննդող կանանց աղատել աշխատանքից ոչ պակաս քան իւրաքանչ. 3 ժամը միանգամ, ո՛չ պակաս կէս ժամ ժամանակամիջ.:

8) Պետական ապահովութիւն բանւորներին, ծերութեան և աշխատելու ընդունակութիւնների կորստեան դէպքում, որոշ ֆոնդի հաշիւն՝ կազմւած կապիտալիստների վրայ դրած առանձին հարկերի միջոցով:

9) Արգելումն աշխատավարձի տպրանքներով վճարել. սահմանումն իւրաքանչիւր շաբաթ վճարել աշխատավարձը աշխատանքի ժամանակ:

10) Արգելումն ձեռնարկողներին հանելու աշխատավարձից գանազան փողային հաշիւներ, ինչ առիթով և նպատակով էլ այդ արւած լինի:

11) Նշանակել կարևոր քանակութեամբ ֆարրիկային տեսուչներ արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում. տեսչութեան հսկողութեան տարածումն բոլոր ձեռնարկների վրայ, որտեղ գործադրու՞մ է վարձու աշխատանքը (աների, հիւրանոցների ծառայողների աշխատանքն ևս մտնում է

այդ հսկողութեան ասկ)՝ Տեսչուհիներ նշանակել այն ճիւղերում, որտեղ գործադրում է կանացի աշխատանքը: Բանւորների բնարւած և պետութի նից ապահովեցրած ներկայացուցչական մարմնի հաստատութիւն, հսկելու ֆարբիկային օրէնքների գործադրութեան վրայ:

12) Տեղական ինքնավարութեան պատշաճաւոր մարմինները, բանւորների կողմից բնարւած ներկայացուցչուների մասնակցութեամբ, հսկում են այն բնակարանների առողջապահիկ գրութեան վրայ, որ տալիս են բանւորներին գործատէրերը. հսկում են նոյնպէս նրանց ներքին կանոնաւորութեան և վարձով տալու պայմանների վրայ, որպէսզի թոյլ չ'տան գործատէրերին միջամտելու բանւորների և՛ մասնաւոր և՛ քաղաքացիական կեանքի ու գործունէութեան մէջ:

13) Հաստատել կանոնաւոր կազմակերպւած վերահսկողութիւն բոլոր ձեւնարկութիւնների վրայ, որտեղ գործադրում է վարձու աշխատանք, միանգամայն՝ անկախ ձեւնարկողների կողմից հիմնւած բժշկա-սանիտարական կազմակերպութիւններից:

Անվճար բժշկական օգնութիւն բոլոր բանւորներին, պահպանելով նրանց վարձադրութիւնը հիւանդութեան ժամանակ:

14) Քրէական պատասխանատւութիւն աշխատանքի ապահովութեան համար հաստատւած օրէնքները դանցառող գործատէրերի վերաբերմամբ:

15) Հիմնել աշխատանքի գատարանների արդիւնագործութեան բոլոր ճիւղերում, բանւորների և ձեւնարկողների կողմից համահաւասար թւով բնարւած ներկայացուցչուների միջոցով:



16) Տեղական ինքնավարութեան պարտականութիւնն է հիմնել տեղական և եկտր բանւորների համար աշխատանքի բօրսաներ, որի վարչութեան մէջ պիտի մասնակցեն բանւորական կազմակերպութիւնների ներկայացուցիչները:

Սօց.-զեմկրատ. բանւորական Հայ կազմակերպութեան կազմակերպչական սիստեմը.

Գասախրարակելու պրօլետարիատը իւր գասակարգային շահերի խօր գիտակցութեամբ, արագացնելու և զբախան գարձնելու համար նրա առաջխաղացութիւնը, անհրաժեշտ է կազմակերպել նրան այնպիսի բիստեմով, որ նախ՝ պետութեան մէջ իւրաքանչիւր ազգի պրօլետարիատ կազմակերպւած, միաձոյ սյժ ներկայացնէ, իրբև կուտոյ բանակ, այդ ազգի բոյսը բլակցիօներ, բուրժուազական հոսանքների և կուսակցութիւնների հանդէպ. երկրորդ՝ սրպէտղի ամբողջ պետութեան բոյսը ազգութիւններին պատկանող պրօլետարիատն իրենից ներկայացնէ մի կենտրօնացած և միացած գասակարգային Սօց.-զեմ. կուսակցութիւն՝ բնդղէմ ամբողջ պետութեան բուրժուական կառավարութեան ու կուսակցութիւնների և միահամուռ սյժերով մղէ իր բնդհանուր անտեստկան ու քաղաքական կախը կապիտալիստական ներկայ կարգերի դէմ առհասարակ:

Ի նկատի ունենալով այդ, Սօց.-զեմօկրատիական բանւորական հայ կազմակերպութիւնն առաջադրում է հետևեալ կազմակերպչական սիստեմը.

1) Ռուսաստանի միաւորեալ Սօց.-զեմ. բան. կուսակցութիւնը կազմում է ազգային աւտօնօմ (ինքնավար) Սօց. զեմ. բանւորական կազմակերպութիւնների միութիւնից՝ կուսակցութեան համագումարում ընդունւած միևնոյն ծրարի և կանոնադրութեան հիման վրայ:

2) Կուսակցութեան իւրաքաչիւր ազգային Սօց.-դեմ. բան. կազմակերպութիւն ինքնազար է իւր ներքին գործերում:

3) Իւրաքանչիւ ազգային Սօց.-դեմ. բան. կազմ. ունի իւր կօմիտէները, կենտրօնական կօմիտէն, կենտրօնական օրգանը, գրամարկըր և համագումարները:

4) Ըյն տեղերում, որտեղ գոյութիւն ունեն և այլ կազմակերպութիւնների կօմիտէներ, գործնական ընդհանուր խնդիրները (օր. գործադուլներ, ցոյցեր) վարելու համար, այդ կազմակերպութիւնների տեղական կօմիտէների հաասար ներկայացուցիչներից կազմուում է բիւրօ, որին է յանձնուում միջնորդ և վարիչ օրգանի գերը, որի վճիռը պարտաւորեցուցիչ է տեղական բոլոր կօմիտէների համար: Հարցերը լուծուում են ձայների պարզ մեծամասնութեամբ:

Ծանօթ. Ըյդ բիւրօյի անդամները զանուում են տեղական կօմիտէների գերիշխանութեան տակ, իւրաքանչիւր կօմիտէ իրաւունք ունի իւր ներկայացուցիչը փոխել, եթէ ուզենայ:

5) Իսկ այն տեղերում, որտեղ կայ մի կազմակերպութեան բիւրօ, նա վարում է տեղի ամբողջ բանտրութեան գործը, համաձայն իր կազմակերպութեան կանոնադրութեան:

6) Կուսակցութեան ամենարարձը հիմնարկութիւնը հանդիսանում է կուսակցութեան համագումարը, համագումարը հրաւիրուում է կենտրօնական կօմիտէի կողմից իւրաքանչիւր տարին մի անգամ: Կենտրօնական կօմիտէն պարտաւոր է արտակարգ համագումար հրաւիրել, եթէ այդ պահանջուում են ձայն ունեցող կազմակերպութիւնների կիսից աւելին: Համագումարը կազմուում է կուսակցութեան

կենտրոնական կոմիտէի բոլոր անդամներից և ազգային աւստօնօմ Սօց.-դեմ. բան. կազմակերպութիւնների ներկայացուցիչներից, Համագումարն օրինական է. եթէ ներկայ են ձայնաւար ներկայացուցիչների կիսից աւելին:

7) Կուսակցութեան կենտր. կոմիտէն կազմուծ է ազգային Սօց.-դեմ. կազմակերպութիւնների հաւասար թւով ներկայացուցիչներից:

Ծանօթ.—Խրաբանչիւր կազմակերպութիւն իւր ներկայացուցիչներին ընտրում է իւր համագումարում մի ասարի ժամանակով:

8) Կուսակցութեան կենտր. կոմիտէն ղեկավարում է կուսակցութեան բոլոր քաղաքական և անասական կախիւր, ընթացք է ապիւս կուսակցութեան ընդհանուր գործունէութեանը, կուսակցութեան կողմից յարարելութեան մէջ է մտնում միւս երկրների Սօց.-դեմ. կուսակցութիւնների և առհասարակ այլ կուսակցութիւնների հետ, ընծում ու լուծում է կազմակերպութիւնների մէջ ծագած խնդիրները, հսկում է կուսակցութեան ծրագրի և կանոնադրութեան վրայ, կառավարում է կուսակցութեան կենտրոնական գրասենտրը, որը կազմում է կազմակերպութիւնների մտցրած գրամական որոշ տեղաններից, ղեկավարում է կուսակցութեան կենտրոնական օրդանը:

9) Կուսակցութեան կենտր. կոմիտէում խնդիրները լուծում են ձայների պարզ մեծամասնութեամբ, ի բաց առած այն կարեւոր խնդիրները, որոնց համար նախապէս սրոշում է ձայների  $\frac{2}{3}$ —ը:

10) Կենտրոնական կոմիտէի վճիռները պարտաւորեցուցիչ են բոլոր կազմակերպութիւնների համար:

11) Կենտրոնական կոմիտէի յարարելութիւնները կուսակցութեան մէջ մանող ազգային Սօց.-դեմ. կազ-

մակերպութիւների հետ, կատարուած է վերջիններիս կենտր. կօմիտէի միջոցով:

12) Կուսակցութեան կենտրոնական կօմիտէն իրաւունք ունի հետացնելու իւր ներկայացուցիչ անդամներից որ և է մէկին, եթէ գրան համաձայն են կենտր. կօմիտէի ձայների  $\frac{2}{3}$  —ը և այն կազմակերպութեան համագումարը, որի ներկայացուցիչն է հեռացուող անդամը:

13) Կուսակցութիւնն ունի կենտրոնական օրդան, որի խմբագրութիւնն ընտրուած է կենտր. կօմիտէի կողմից:

---

Մօց.-ղեմակրատ. բան. Հայ կազմակերպութեան  
կանոնադրութիւնը.

I.

1) Մօց.-ղեմ. բան. հայ կազմ. հանդիսանում է ինքնավար մի կազմակերպութիւն, իբրև ներկայացուցիչ հայ պրօլետարիաւի:

2) Մօց.-ղեմ. բան. հայ կազմ. անդամ կարող է լինել նա միայն, ով ընդունում է կազմակերպութեան ծրագիրը, կանոնադրութիւնը, տաքտիկը և գործում է կազմակերպութեան խմբերից խամ մարմիններից մէկի մէջ:

3) Կազմակերպութիւնը բաղկացած է պարզ խամ պրօֆեսիօնալ խմբերից բաղաքններում և զիւզերում:

4) Մի քանի այդպիսի խմբեր միանալով ընտրում են մի քաղաքի կօմիտէն կամ մի զիւզի ենթակօմիտէն:

5) Այդ ձևով ընտրւած կօմիտէներն հաստատում են կազմակերպութեան կենդ. կօմիտէի կողմից, իսկ ենթակօմիտէներն հաստատում են իրենց շրջանի կօմիտէի կողմից:

6) Կօմիտէները և ենթակօմիտէները վարում են իրենց տեղի գործերն ինքնավար կերպով: Առանձնայատուկ դեր կատարող խմբերի իրաւունքներն որոշւում են նրանց ստեղծող և ղեկավարող մարմինների կողմից:

7) Կօմիտէների և ենթակօմիտէների պաշտօնն է մղել սօցիալիստական ազիտացիա և պրօպագանդա գրաւոր և բերանացի, կազմել խմբեր և սինդիկատներ, վարել տեղի տնտեսական ու քաղաքական կռիւր:

8) Կազմակերպութեան իւրաքանչիւր մարմին պարտաւոր է ամիսը մի անգամ մանրամասն հաշիւ ներկայացնել իրենից բարձր հիմնարկութեան:

AT  
2017



9) Կազմակերպութեան խրաքանչիւր մարմին խնդիրները լուծում է ձայների պարզ մեծամասնութեամբ, բացի այն կարևոր խնդիրներից, որոնց լուծման համար նախապէս ընդունում է ձայների  $\frac{2}{3}$ —ը: Կոմիտէների կամ ենթակոմիտէների միջից հետացած անդամի տեղ, ընդրողների մեծամասնութեամբ ընտրում են նորը: Կենտրոնական կոմիտէի կողմից առաջարկած անդամները քուէարկութեան են ենթարկում և ընտրում ձայների պարզ մեծամասնութեամբ:

10) Կազմակերպութեան ամեն մի անդամ նխապէս օժանդակում է կազմակերպութեան:

## II.

### Հ ա մ ա ղ ու մ ա ր .

11) Կազմակերպութեան ամենարարձք հիմնարկութիւնը հանդիսանում կազմակերպութեան համազումարը: Համազումար հրաւիրում է կազմակերպութեան կենտր. կոմիտէի կողմից տարին մի անգամ: Կենտրոնական կոմիտէն պարտաւոր է արտակարգ համազումար հրաւիրել, եթէ այդ պահանջում են ձայն սւնեցող մարմինների կիսից աւելին:

12) Համազումարին մասնակցում են բոլոր իրաւազօր կոմիտէներն 2—ական ձայնով, կենտրոնական կոմիտէն երկու ձայնով, կենտրոնական օրգանը երկու ձայնով: Եյս բոլոր մարմիններն ուղարկում են համազումարին երկու երկու ներկայացուցիչ:

Ծանօթ. 1. կազմակերպութեան մարմինները կարող են սղարկել ուրիշ անդամներ էլ խորհրդատու ձայնով, միայն պիտի իմաց տան նախօրօք կենտր. կոմիտէին և ոտանան նրա համաձայնութիւնը:

Ծանօթ . 11.— Իրաւագօր են այն կօմիտէնէրն, որոնք հաստատուել են համագումարից վեց ամիս առաջ,

13) Համագումարը վաւերական է միայն այն դիպ-ւածում, երբ ներկայ են իրաւագօր մարմինների կիսից աւելին:

14) Համագումարի վճիռներն անցնում են ձայների պարզ մեծամասնութեամբ:

### III.

#### Կենտրօնական կօմիտէ.

15) Մի համագումարից մինչև միւս հերթական համագումարը, կազմակերպութեան ղեկավարութիւնը ստանձնում է կենտր. կօմիտէն: Նա ղեկավարում և միաց-նում է կազմակերպութեան տնտեսական և քաղաքական կոիւր, պահպանում է յարաբերութիւններ սօցիալիստական այլ կազմակերպութիւնների հետ, հաստատում է կօմիտէ-ները, հսկում է կազմակերպութեան բոլոր մարմինների վրայ, որպէսզի որոնք յարգեն համագումարի որոշումները և չ'շեղեն կազմակերպութեան ծրագրի, կանոնադրու-թեան և տարտիկի ընդգծած ուղուց: Նա հայթայթում է միջոցներ կազմակերպութեան նիւթական ապահովութեան համար, պահում է կազմակերպութեան կենտր. գրամարկը, ստանում է կօմիտէներից նրանց ունեցած գրամի մի մասը, մի անգամ ընդ միշտ հաստատելով որոշ տոկոս այդ մարմինների համաձայնութեամբ: Նա ղեկավարում է կուսակցութեան կենտրօնական օրգանը:

16) Կենտրօնական կօմիտէն ներկայացնում է հաշիւ իւր գործունէութեան մասին համագումարին, կազմում է համագումարի օրակարգը և հրաւիրում է համագումար, մի

ամիս առաջ ուղարկելով հրաւերը և օրակարգը բոլոր իրաւագոր մարմիններին:

17) Կենտրոնական կոմիտէն քննում է կազմակերպութեան մարմինների մէջ ծագած աւարածայնութիւնները և կայացնում որոշումներ, որոնք պարտաւորեցուցիչ են կազմերի համար:

18) Կենտրոնական կոմիտէն ընտրում է համագումարի կազմից մի ատարով:

Իտանօթ. — Էթէ կենտր. կոմիտէն ձերբակալեց ամբողջութեամբ, կենտր. Օրգանի խմբագրութիւնն հրաւիրում է իրաւագոր մարմիններից մի-մի ներկայացուցիչ և ներկայացուցչական այս ժողովը կառարում է նոր կենտր. կոմիտէի ընտրութիւնը: Իսկ այն դիպեաժում, Էթէ պակասեց մի մասը, մնացած մասը հրաւիրում է նոր անդամներ:

19) Կազմակերպութեան իւրաքանչիւր անգամ կամ մարմին իրաւունք ունի իր առաջարկները, պահանջները և բողոքը տեղական օրգանների միջոցով հասցնել կազմակերպութեան կենտր. կոմիտէին:

20) Կազմ. կենտր. կոմիտէն յայտարարում է արձակած մի սր և է կոմիտէ, Էթէ տեղի կազմակերպւած բանտրների մեծամասնութիւնը պահանջում է այդ:

21) Կենտր. կոմիտէի բոլոր որոշումները պարտադիր են կազմակերպութեան բոլոր հիմնարկութիւնների համար:

## IV.

### Կազմակերպութեան մասուլը.

22) Կազմակերպութիւնն ունի կենտր օրգան:

23) Սրա խմբագրութիւնն ընտրում է կենտր. կոմիտէի կազմից:



24) Կենտր. Օրդանի խմբագրութիւնը վարում է կազմակերպութեան իդէական գործունէութիւնը.

Ըմբողջ մամուլը գտնուում է կենտր. կօմիտէի հսկողութեան տակ. սա կարող է արձակել կենտր. օրդանի խմբագրութիւնը և հրատարակ նորը:

25) Կազմակերպութեան ամեն մի մարմին իրաւունք ունի հրատարակել իր մասնաւոր կարիքներին համապատասխանող որոշ գրականութիւն:

## V.

### Արատաստմանեան կօմիտէ.

26) Արատաստմանեան կօմիտէն պարտաւոր է կատարել համազումարի և կենտր. կօմիտէի աւած այն յայտարարութիւններն, որոնք վերաբերում են բացառապէս արատաստմանին:



Սօց.-դեմ. բան. հայ կաղմակերպութեան առաջին  
խորհրդածոյովի կայացրած սրտչումները:

1) Լիբերալների մասին.

Ընդունելով լիբերալների քաղաքական ձգտումները անանկ որ և է դեր խողալու ներկայ Ռուսաստանում, ընդունելով նրանց քաղաքականութիւնը շողորթութեան ու զիջումների քաղաքականութիւն, խորհրդածոյովը գանում է անհրաժեշտ՝ հեռու պահելու պրօլետարիաաը նրանց հովանաւորութիւնից, միաժամանակ հրաւիրելով իր բոլոր ճիւղերի ուշադրութիւնը հայ լիբերալների վրայ, գանելով դրանց միապետական, բէակցիօններ մի տարր, գուրկ քաղաքական պահանջներից: Առանձնապէս խորհրդածոյովը հրաւիրում է իր բոլոր ճիւղերի ուշադրութիւնը հայ լիբերալների քաղաքականութեան վրայ, երբ նրանք խօսում են ամբողջ հայ ազգի անունից և այդ ամենը շահագործելով, իրենց համար նորանոր գիրքեր են գրաւում մեր հասարակական կեանքում: Ի նկատի ունենալով այդ բոլորը, խորհրդածոյովն յանձնարարում է իր բոլոր ճիւղերին այդպիսի բռնութեամբ բողոքելու հայ պրօլետարիատի անունից ու կուելու այդ ցինիկ արարքների դէմ, բացաղրելու բանւորութեան-նրանց խարուսիկ ու վնասակար գործունէութիւնը նրա շահերի համար և հեռու պահելու նրան հայ լիբերալների խնամատարութիւնից.

2) Հնչակեանների մասին.

Ընդունելով հնչակեաններին ընդհանրապէս փոքր բուրժուազական մի կուսակցութիւն, ընդունելով որ իրա-

պէս այդ „կուսակցութիւնը“ զուրկ է եղել մի հեռուդահան գործունէութիւնից թէ՛ գրաւոր և թէ՛ գործնական կեանքում. քչեկով երբէմն մինչև ամենայնաին նացիօնայիզմը և հիմնելով իր գործունէութիւնը ժողովրդի ամեն խաւերի վրայ անխտիր, ի նկատի ունենալով գրաւոր ու պրակտիկ գործունէութեան այն խասօսային, հակասական գրութիւնն, որ այսօր իշխում է այդ „կուսակցութեան“ մէջ, որը առանց քաշելու շահագործում է զեռ թիւրքահայ դատը և պրօլետարիատի կախը,— խորհրդածողովը գտնում է Հնչակեան „կուսակցութիւնը“ զուրկ կուսակցութիւն կոչելու իրաւունքից, համարելով այդ խառնիճադանճ մարդկանց մի խառնուրդ, անսկզբունք, անդիպցիւլին ու քաղաքականապէս անդաստիարակ, խորհրդածողովն յայտատարում է, որ այդ „կուսակցութիւնը“ հայ պրօլետարիատի համար ամենավտանգաւոր մի տարր է, նամանաւնդ որ այդ խառնուրդն ընթանում է „Սօցիալ-դեմօկրատիայի“ գիմակի տակ: Ի նկատի առնելով այդ բոլոր հանդամանքները, խորհրդածողովն յանձնարարում է իր բոլոր օրդաններին՝ անխնայ մերկացնել հայ բանտրութեան առաջ Հնչակեանների իսկական գիմակն ու էութիւնը և ամենաեռանդուն պրօպագանդայի միջոցով ազատել բանտրութիւնն այդ „կուսակցութեան“ բացասական ազդեցութիւնից:

### 3) Գաշնակցութեան մասին.

Սօց.-դեմ. բան. հայ դադմակերպութեան խորհրդածողովն ընդունելով, որ ներկայ Սօցիալ-քաղաքական պայմանները և հայ իրականութեան բացասիկ գրութիւնը միանգամայն նպաստաւոր են նացիօնալիստական շարժում-

ների համար, հրաւիրում է իր բոլոր օրդանների ուշադրութիւնը առանձնապէս հայ կեանքի մի կուսակցութեան վրայ, որ ազգային դատ վարելու յաւակնութիւնն ունի.

Ի նկատի առնելով, որ այդ կուսակցութիւնը հայ յեղափոխական դաշնակցութիւնը— ըստ իր էական բնոյթի, մի մանր—բուրժուազական այսպէս անուանած յեղափոխական կուսակցութիւն է, ունենալով իր ինչ-ինչ քաղաքական զեմօկրատիական տենդենցիաները, որ, հետևապէս, նրա բանակը բաղկացած է ժողովրդական խայտարակախակների մի կօլոստի կօնկլօմերատից, զօւրկ միանդամայն դասակարգային բնօյթից. ի նկատի առնելով, որ Իսաչնակցութիւնը շէմած «Տաճկահայ դատ»-ի բարեյաջող լուծման իլլիւզիաներով, տարիներ շարունակ շահագործում է Կովկասահայ մասսայի՝ առանձնապէս պրօլետարիատի, նայիւ հաւատը առանց յեղափոխական ակտի քաղաքականութիւն վարելու իրա Կովկասահայերի համար, բացի մասնակի տերթօրներէց. այնուհետեւ ի նկատի առնելով այն անկօնարօլ, անկազմակերպ և լոկ միայն տարերային հասանքը, ասել է՝ անարխիստական միջնօրրդը դաշնակցական կուսակցութեան, որ առիթ է տալիս մի կողմից ծայրերում կատարելու հազար ումի բանութիւններ ու ճնշումներ գաւառական ազգարնակութեան մէջ, իսկ միւս կողմից դաշնակցական անհատների ու խմբերի շողորթութ քաղաքականութեան դէպի միապետութիւնը— ի նկատի առնելով այդ բոլորը—խորհրդածողովն յանձնարարում է իր բոլոր օրդաններին ամենախիստ պրօպագանդայի միջոցով իր դասակարգային շահերի գիտակցութեանը բերել հայ պրօլետարիատին և հասկացնել նրան իր թշնամի կուսակցութեան միատուները, կործանիչ ներգործութիւնը:

4) «Սօցիալիստ-յեղափոխականների» մասին.

Համարելով Սօցիալիստ—յեղափոխականներին, որպէս մանր-բուրժուազական մի կուսակցութիւն, ի նկատի առնելով նրա անորոշ քաղաքական ձյառմաները, նրա բէակցիօններ դերը մանր բուրժուազական բնատրութեամբ և օգրարային ծրագրով, ի նկատի առնելով նրա սէրը դէպի այնօրինակ նացիօնալիստական մտրմիններ, ինչպէս «Գաշնակցութիւն»-ը և «Սազարթ վիճի» —խորհրդածոյովը գանձում է այդ կուսակցութիւնն ոչ քաղաքական—գասակարգային կուսակցութիւն, իր որոշ քաղաքական ձգտումներով, այլ պրօլետարիատի գիտակցութիւնը մի՞թէ գննեցնող և կրկնակի մի՞թէ գննեցնող հայ պրօլետարիատի գիտակցութիւնը, նրա բարեկամութեամբ հայ նացիօնալիստներին հեա:

5) Կոմկոսսեան «փոխրամասնութեան» մասին.

Ի նկատի առնելով սուս սօց-դեմ. կուսակցութեան «փոխրամասնութիւն» կոչում Ֆրակցիայի անհետազական գործունէութիւնը, ի նկատի առնելով նրա բնած պարսակի տարար դէպի քաղաքական նոր ֆակտօրները, ինչպէս է պետական գուման, ի նկատի առնելով նրա տարախիւս, անմիտ տերրօրները, Հանակի գործադուլները, անդիւցիային և անակգրունը ձեւնարկութիւնները, ինչպէս Բագի բանօրները կողմից ներկայացուցիչներ ուղարկելը նախարարինարերողներին ժողովին, որոնք միանգամայն դուրս են սօց-դեմօկրատիայի հայեցողութեան շրջանից.— խորհրդածոյովը վճակեց յայտարարել, որ այդ ֆրակցիան կազմալուծւած, քաղաքականապէս անգաստարակ մի համախմբութիւն է, որ իր անարթիստ սկան ձեւ-

նարկներով գործելով Սօց-դեմոկրատիայի դիմակի տակ, միանդամայն բացասական ներգործութիւն ունի պրօլե-տարիատի վրայ:

6) Ռուս. սօց.-դեմ. բան. կուս. մասին.

Ընդունելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի Սօց.-դեմ. բանուորական կուսակցութիւնը իրեն համարում է ամբողջ Ռուսաստանի պրօլետարիատի ներկայացուցիչ, բայց իր գործունէութեամբ և կազմով իրապէս նա այսօր միայն սուս և վրացական պրօլետարիատի ներկայացուցիչն է. ՚ի նկատի ունենալով, որ նոյն իսկ այդ կուսակցութիւնը չէ ներկայացնում մի կուսակցական ամբողջութիւն, այլ «մեծամասնութիւն», «փոքրամասնութիւն» անունների տակ երկու ֆրակցիաներ, աւելի շուտ կազմակերպւած և դեկաւարւած անձնական կրքերով քան բարձր սկզբունքային խնդիրներով. ՚ի նկատի առնելով, որ նա մինչև այսօր չէ կարողացել կանոնաւոր դաստիարակել և կազմակերպել հայ պրօլետարիատը, շնորհիւ իւր ներքին կազմալուծման և կազմակերպչական աննպատակայարմար սիստեմի, որ նա անկարող է եղել հոսկանալ զանազան ազգութիւնների բանուորութիւնների ներքին առանձնայատուկ բաղաճական հասարակական պայմանները, մասնաւորապէս հայ պրօլետարիատի. — Սօց.-դեմ. բան. հայ կազմակերպութեան խորհրդաժողովն յայտարարում է, որ այդ կուսակցութիւնն անընդունակ է հանդիսանալ հայ պրօլետարիատի ներկայացուցիչը:

*Կ. Կոմ. Խորհրդի Կարգադրութիւն - 1921 թ.*

՚ի նկատի առնելով, որ Ռուս. Սօց.-դեմ. բան. կուս. վերջին կովկասեան արիւնահեղ գէպքերի ժամանակ, երբ կազմալուծուած էր և կոտորուած հայ բանուորութիւնն և աղքատ գիւղացիութիւնը, անտարբեր զանուց իւր ուժեղ

բողոքը բարձրացնել, որ և է կերպ օգնել կամ միջոցներ առաջարկել այն բանորութեան, որի ներկայացուցիչ է համարում իրեն. այլ բուխ անտարբերութեամբ միայն հանդիսաանս եղաւ ամենաբարբարոս տեսարանների ՚ի նկատի առնելով, որ նոյն այդ կուսակցութիւնը կեանքի կոչեց նացիօնալիստական մի «կուսակցութիւն», ինչպէս հնչակեանք, որ միայն բացասական ոյժ է հայ բանօրութեան համար.—Սօց.-դեմ. բան. հայ կազմ. խորհրդածո-ղովն իր կշտամբանքն է յայանում Ռուս. Սօց.-դեմ. բան-կուս. շճանաչելով նրան իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած կուսակցութիւն:

7) *Մեր դիրքը դեպի զանազան կուսակցութիւն-ներ և մարմիններ յեղափոխական ակտերի ժա-մանակ.*

Խորհրդածողովն որոշեց յեղափոխական ակտերի ժա-մանակ համաձայնութեան զալ ժամանակաւոր բլօկով, միաժամանակ և միասին գործելու այն բոլոր բնդդիմա-դիր տարրերի հետ, որոնց մօտաւոր նպատակն է ինքնա-կալութեան տապալումը. միշտ բացատրելով բանօրութեան այդ տարրերի շափաւոր պահանջները և հակապրօլետա-րական էութիւնը բանօրութեան ձգտումների նկատմամբ:

8) *Զինուակ մարտի.*

՚ի նկատի ունենալով, որ քաղաքական ներկայ կար-գերի տակ անկարելի է պրօլետարիատի և առհասարակ բոլոր աշխատաւոր մտասաների կանոնաւոր զարգացումը, որ նրա քաղաքական իւրաքանչիւր բայի մէջ զգացում է զինուած լինելու անհրաժեշտութիւնը և որ այդ կարգերը

Վերջնականապէս կարող են փոխել միայն զինուած ապս-  
տամբութեան շնորհիւ, — խորհրդածողովն անհրաժեշտ է  
գանում զինել պրօլետարիատին:

9) *Յեղափոխութեան մասին.*

Ի նկատի առնելով, որ մասնակի ցոյցերով ու գոր-  
ծողութիւններով միայն ջլատում են բանուրութեան սյ-  
ժերը, յաճախ առաջ բերելով ընկալելիք. Ի նկատի առնե-  
լով, որ պրօլետարիատի դատարարակութեան համար արդէն  
անցած պիտի համարել մասնակի գործողութիւնների  
չըջանք. Ի նկատի առնելով, որ մասնաւորապէս հայ պրօ-  
լետարիատի պայմաններն անկարելի են դարձնում ներկա-  
յումս որ և է մասնակի գործողութիւն, — խորհրդածողովը  
վճռել է բռնել կազմակերպելու, զինելու և դատարարակելու  
ճանապարհը՝ պատրաստելով ընդհանուր յեղափոխութեան  
համար:

10) *Պեսակաւն դումայի մասին.*

Համարելով պետական դուման իրրեւ վիժւածք սնան-  
կացած ցարիզմի, որը յեղափոխական պրօլետարիատի ար-  
մատական պահանջների դիմաց շարակ է մի անձայն,  
անկաժք ու անմիտ հաստատութիւն, որ շի կարող բաւա-  
րարել նոյն իսկ ամենաշափաւոր տարրերի մինիմալ պա-  
հանջները. Սօց.-դեմ. բան. հայ կազմ. խորհրդածողովը  
գանում է, որ նա - ընդհակառակը մի նոր շարիք է յեղա-  
փոխական պրօլետարիատի համար, որ այդ միայն մի վա-  
հան է ցարիզմի լուծւած լեշի պաշտպանութեան համար՝  
որ զրանով ցարիզմը օգնութեան կոչելով երկրի ամենայն-  
ատամնաց տարրերին, նա նոր սյժ է հաւաքում կուելու ա-  
ւելի վայրենի միջոցներով յեղափոխական պրօլետարիատի



զէն: 'Ի նկատի աննկալ նաև, որ պետական դաման պիտի լինի ցարիզմի արբանեակների կառավարութիւնը, որը կ'փակելի, երբ կ'կամենայ անսանձ միապետութիւնը և կ'կանգնի իբրև զեկարացիա ծածկելու ինքնակալութեան բոլոր նենգութիւններն ու խաղերը, — խորհրդածոցովը վճանց իբր բոլոր օրգանների եռանդուն պրօպագանդայի միջոցով բացազրել բանուորութեան՝ ցարիզմի այդ խաղը և նրա վնասակար ներգործութիւնը պրօլետարիատի յեղափոխական կուի համար. բուն եռանդով կուիլ զբազէմ թէ՛ գրատար և թէ՛ բերանացի պրօպագանդայի միջոցով, հետև պահելով բանուորութեան այդօրինակ խարուսիկ ու նենգ հաստատութիւններից և պատրաստելով նրան ընդհանուր ազատամբութեան համար:

11) *Թուրք պրօլետարիատի մեջ գործելու մասին.*

'Ի նկատի աննկալով թուրք պրօլետարիատի շահագործումը սոսկալի շափերով, 'Ի նկատի աննկալով, որ այդ պրօլետարիատը դուրկ է իր սեփական սոցիալիստական ինտելիգինչիայից, հասկարար դուրկ է և դասակարգային ինքնազիտակցութիւնից, որի շնորհիւ նա կոյր գործիք է դարձել ինքնակալութեան և մահմեդական օրտապետող դասակարգերի ձեռքին. 'Ի նկատի աննկալով, որ այդ հանգամանքը խոշնդօտ է դասնում կոլկասեան ընդհանուր պրօլետարիատի և մասնաւորապէս հայ պրօլետարիատի յեղափոխական կուին, — խորհրդածոցովն յանձնարարում է իր բոլոր ճիւղերին ըստ կարելոյն նպատակով թուրք պրօլետարիատի դասակարգային դիտակցութեանը թէ՛ գրատար և թէ՛ բերանացի պրօպագանդայի ու ազխտացիայի միջոցով:

12) *Թուրք—հայկական ջարդերի մասին.*

Ի նկատի ունենալով, որ թուրք—հայկական ջարդերն հեռանք են սուսական ինքնակալութեան լարած որոգայթներին՝ խեղդելու կովկասեան յեղափոխական շարժումներն, և սր այդ ահասկ ջարդեր տեղի ունեն և կարող են կրկնուի նաև ապագայում զանազան ազգութիւնների մէջ, միապետական կառավարութեան նախաձեռնութեամբ և քաջալերութեամբ, ի նկատի ունենալով, որ այդ ջարդերը նպաստում են թուրք յետամնաց տարրերի—բուրժուազիայի և բէկութեան քաղաքական—տնտեսական ձգտումներին՝ պատրաստելով պանխուամիզմի հողը, զարգացնելով նացիօնալիստական—չօվինիստական ձգտումները բնդհանքապէս երկու ժողովուրդների մէջ և պառակալելով այդ ժողովուրդների համերաշխութիւնը, ի նկատի ունենալով, որ այդ ահասկ ջարդեր և ազգային առեւտրութիւններ արդիւնք են սրտ շափով զանազան ազգութիւնների բուրժուազական դասակարգերի մրցման.—խորհրդածողովն առջարկում է իր բոլոր ճիւղերին՝ վարել ամենախօսք և ամենաեռանդուն պրօպագանդա ու ազիտացիա բնդդէմ ինքնակալութեան, բորժուազիայի, բէկութեան և դրանց շահերն արտայայտող կուսակցութիւնների, ցոյց տալով այդ տարրերի խաղացած վնասակար դերը ներկայ ջարդերի մէջ, դիմել հայ բանորութիւնը և դիւզացիութիւնը ինքնապաշտպանութեան համար, հետև մնալով նախայարձակ լինելուց և հարկ եղած պարագայում համերաշխ գործելով ինքնապաշտպանութեան դիմող այլ կաղմակերպութիւնների հետ:

13) „Թիւրքահայ դաս”ի մասին.

Սօց.-դեմ. բան. հայ կազմակերպութիւնը լինելով դասակարգային կուսակցութիւն և որպէս այդպիսին՝ սուսահայ պրօլետարիատի քաղաքական ներկայացուցիչը. հրաժարում է առհասարակ համազգային դատը վարելուց ևս ձեռնպահ է մանաւանդ այն տերրիտօրիաների նկատմամբ, որոնք դուրս են գտնուում այն աշխարհագրական սահմաններից և քաղաքական շրջանակներից, ուր ևս գոյժում է, որպէս ակտիւ յեղափոխական կուսակցութիւն.

Ի նկատի առնելով, որ թուրքահայ խնդիրը մի առաջնակարգ քաղտրական խնդիր է, որը պիտի լուծուի միայն և բացառապէս քաղաքական ճանապարհով, որ թուրքահայ դատը միայն դատ է թուրքահայերի համար. Ի նկատի առնելով, որ ոչ թիւրքայի յեղափոխական այժմէն են բուարար և ոչ էլ թիւրքիայով շահագրգուած եւրոպական մեծ պետութիւնների դիպլօմատիական յարաբերութիւնները նպաստուօր, որպէսզի լուծէին „Երեկեան խնդրի” այդ բարդ հատուածը, — խորհրդածողովը գտնում է մինչև աննախատեսելի ապագայ, անհուանական և անկարելի թուրքահայ խնդրի բարեյաջող լուծումը.

Ինչպէս մեջազգային Սօցիալ-դեմօկրատիան, այնպէս էլ Սօց.-դեմ. բան հայ կազմակերպութիւնը բողոքում է ինչպէս սուլթանական բռնակալ ընթացի ճնշումների, գազանութիւնների և հալածանքների դէմ, եօյնպէս էլ եւրօպական բուրժուազական — բուրժուաքառական պետութիւնների ցինկ ու կծծի դիպլօմատիայի դէմ, որ ասորիներ շարունակ արնաքամ արին մի բուռն ժողովրդի. ևս յայտնում է իր խորին ցաւակցութիւնն ու համակրանքը տանջուող հայ ժողովրդին և ցանկանում նրա ազատագրութեան արագ վերահասման ժամը:

14) Արեւմտեան Ռուսաստանի ընկերների մասին.

Խորհրդածողովն սգեսուած Պետերբուրգի, Լօզզի, Վարշաւայի և առհասարակ Արեւմտեան և Հարա—Արեւմտեան Ռուսաստանի ընկերների յեղափոխական կողմակերպուած կուից, իր ջերմ սղջօյններն է սպարկում կուտղ ընկերներին՝ նրանց հերոսական և գիտակից քաշիքի համար:

15) Միջազգային սօցիալիստական բիրտոյի և գերմ. սօց.-դեմ. կուու. մասին.

Խորհրդածողովն յանձնարարեց կենարօնական կօմիտէին ընկերական շնորհակալութիւնն յայանելու միջազգային սօց. բիրտոյին և գերմանական սօց.-դեմ. նրանց ցոյց աւած բարոյական և նիւթական աջակցութեան համար:

16) Ժողովրդական գրականութեան մասին.

Ի նկատի սնենալով, որ հայ լեզուով ժողովրդական — սօցիալիստական գրականութիւնը միանգամայն բացակայում է մեղանում, խորհրդածողովն յանձնարարում է կենար. կօմիտէին՝ հրատարակել, յատկապէս բանորական և գիւղացիական լայն մասսաների համար, ժողովրդական գրումքներ:

17) Օսար շեզուով գրականութիւնը հրատարակելու մասին.

Սօց.-դեմ. բան. հայ կազմակերպութեան խորհրդածողովն յանձնարարում է կենար. կօմիտէին և „Սօցիալիստ“-ի խմբագրութեան՝ հարկ եղած գէպքերում հրատարակել օտար, նամանաւանդ սուսերէն լեզուով հրատարակութիւններ, սրանց պարգարանէին կազմակերպութեան ծրագրային, կազմակերպչական և աւարտիական հայեացքները:





ՏՊԸԳՐԻՈՒՄ ԵՆ ԵՒ ՇՈՒՑՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՄՆԵՆ՝

№ 2. Գ. Պլեխանով. Հայրենասիրութիւն և Սօցիալ

№ 3. Ա. Օմելչենկօ. Ո՞ւմ հետ և ո՞ւմ դէմ:

ԹԱՐԴՄԱՆԻՈՒՄ ԵՆ՝

Բատրակ. Ընկեր. մի գաւաճանիր:

Ա. Երմանակիյ. Մեր մօտակա պահանջները և վերջն  
նայ

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.